ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 23.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/94

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.12.2017թ. թիվ 03/26-3/24168-17 գրությամբ «ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>**ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը**</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) 19.12.2017թ. թիվ 01/61-28196 գրության հիման վրա, 22.12.2017թ. թիվ 03/26-3/24168-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **«ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 25.12.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/[1201149]-17 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ին:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Ընկերությունը Խորհրդին դիրքորոշում չի ներկայացրել:

«ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 27.12.2017թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

Երևանի քաղաքապետարանը 19.12.2017թ. թիվ 01/61-28196 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ի միջև 15.02.2017թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/79» ծածկագրով ծառայությունների գնման պայմանագիր:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Ընկերությունը ստանձնել է Երևան քաղաքում ամանորյա ձևավորման ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն՝ Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչության պետին հասցեագրված Ընկերության սնանկության գործերով կառավարիչ Ս. Մանուկյանի 13.12.2017թ. գրության համաձայն՝ «ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ն դատարանի 18.10.2017թ. ԵԿԴ/0185/04/17 վճռով ճանաչվել է սնանկ:

Սնանկության գործերով կառավարիչը հայտնել է նաև, որ Ընկերությունը չի կարող կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Երևանի քաղաքապետարանը հաշվի առնելով վերը նշվածը՝ միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված:

Երևանի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 27.12.2017թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ հայտնած դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2017/94 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/94 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ի միջև 15.02.2017թ. կնքվել է է «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/79» ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագիր:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կատարողը (տվյալ դեպքում՝ «ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ն) ստանձնում է Երևան քաղաքում ամանորյա ձևավորման ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն՝ նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

3. Պայմանագրի թիվ 1 հավելվածի, տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունների մատուցման ժամկետը նախատեսվել է 2017թ. ընթացքում՝ մինչև 2017 թվականի դեկտեմբերի 20-ը:

4. Երևանի քաղաքապետարանը 19.12.2017թ. թիվ 01/61-28196 գրությամբ հայտնել է, որ Ընկերության սնանկության գործերով կառավարիչ Ս. Մանուկյանի 13.12.2017թ. գրության համաձայն՝ «ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ն դատարանի 18.10.2017թ. ԵԿԴ/0185/04/17 վճռով ճանաչվել է սնանկ: Սնանկության գործերով կառավարիչը հայտնել է նաև, որ Ընկերությունը չի կարող կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Երևանի քաղաքապետարանը հաշվի առնելով վերը նշվածը՝ միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված:

5.Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.12.2017թ. թիվ 03/26-3/24168-17 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 19.12.2017թ. թիվ 01/61-28196 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (2017 թվականի ապրիլի 25-ի ՀՕ-21-Ն օրենք) 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

2010 թվականի դեկտեմբերի 22-ի «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում

ստանձնած ***պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Երևանի քաղաքապետարանի և «ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ի միջև 15.02.2017թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/79» ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կատարողը (տվյալ դեպքում՝ «ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ն) ստանձնում է Երևան քաղաքում ամանորյա ձևավորման ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն՝ նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի թիվ 1 հավելվածի, տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունների մատուցման ժամկետը նախատեսվել է 2017թ. ընթացքում՝ մինչև 2017 թվականի դեկտեմբերի 20-ը:

18.12.2017թ. Երևանի քաղաքապետարանին ուղղված գրությամբ «ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ի սնանկության գործերով կառավարիչը հայտնել է, որ «ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ն 18.10.2017 թվականին դատարանի վճռով ճանաչվել է սնանկ և չի կարող կատարել «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/79» ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրով ստանձնած պարտականությունները:

Երևանի քաղաքապետարանը հաշվի առնելով վերը նշվածը՝ միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված:

Այսպիսով Խորհուրդն արձանագրում է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.10.2017թ. թիվ ԵԿԴ/0185/04/17 վճռի համաձայն՝ «ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան***

մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդն արձանագրում է, որ «ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից Երևանի քաղաքապետարանի և «ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ի միջև 15.02.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/79» ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրով նախատեսված պարտավորության չկատարման համար հիմք է հանդիսացել այն փաստը, որ վերջինս Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.10.2017թ. թիվ ԵԿԴ/0185/04/17 վճռի համաձայն՝ ճանաչվել է սնանկ:

Ուստի նման փաստական հանգամանքներում՝ Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետով նախատեսված՝ պայմանագրային պարտավորության խախտում:

Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 22.12.2017թ. թիվ 03/26-3/24168-17 գրությամբ «ԷՅՋԻ ՊՐԻՆՏԻՆԳ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02251614) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ